փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարների, հետևաբար նաև փաստաբանի խելամիտ վարձատրության հետ կապված ծախսի առկայությունը հիմնավորող փաստաթղթեր, որպիսի պարագայում Դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության հետ կապված ծախսի փոխհատուցման վերաբերյալ հայցվոր կողմի պահանջն ենթակա է մերժման և այդ մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18» ծածկագրով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. անվավեր ճանաչել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18» ծածկագրով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերը:

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**